

ԾՐԱԳԻՐ

**«ԱԿՆԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՔԱՐԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՄԱՅՈՎ
 ԱԿՆԱԲՈՒՅԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՅԻ**

Ապրիլի 16, 17 և մայիսի 3, 2018թ.,
 Ապրիլի 16, 17 և մայիսի 4, 2018թ.,
 Ապրիլի 16, 17 և մայիսի 14, 2018թ.

Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ

Օր 1՝ ապրիլի 16		
Անցկացման վայր՝ Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն		
09:30-10:00	Մասնակիցների գրանցում, նախաթեստ:	
10:00-11:15	Ցանցաթաղանթի անատոմիա և ֆիզիոլոգիա:	Սիրանույշ Մատինյան
11:15-12:30	Տեսողական օրգանի ախտահարումը շաքարային դիաբետի ժամանակ:	պրոֆ. Արմեն Վարդանյան
12:30-13:00	Ընդմիջում:	
13:00-15:00	Դիաբետիկ ռետինոպաթիայով հիվանդների հետազոտում:	պրոֆ. Արմեն Վարդանյան, Սիրանույշ Մատինյան, Լիլիթ Արզարյան
15:00-15:30	Գրավոր թեստ:	
Օր 2՝ ապրիլի 17		
Անցկացման վայր՝ Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն		
09:30-10:00	Երկրորդ օրվա նախաթեստ:	
10:00-12:00	Մակուլայի ախտահարումը դիաբետիկ ռետինոպաթիայի ժամանակ:	պրոֆ. Արմեն Վարդանյան
12:00-12:30	Նեովասկուլյար գլաուկոմա:	պրոֆ. Արմեն Վարդանյան
12:30-13:00	Ընդմիջում:	
13:00-14:00	Դիաբետիկ մակուլյար այտուցով հիվանդների հետազոտում:	Սիրանույշ Մատինյան, Լիլիթ Արզարյան
14:00-15:00	Նեովասկուլյար գլաուկոմայով հիվանդների հետազոտում:	Սիրանույշ Մատինյան, Լիլիթ Արզարյան

15:00-15:30	Գրավոր թեստ:	
Օր 3՝ փոփոխվող՝ կախված թիրախային լսարանից		
Մայիսի 3 Արարատի մարզի մասնագետների համար Անցկացման վայր՝ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Արտաշատի ԲԿ		
Մայիսի 4 Արարատի մարզի մասնագետների համար Անցկացման վայր՝ Արարատի մարզ, ք. Վեդի, Վեդու ԲԿ		
Մայիսի 14 Վայոց Ձորի մարզի մասնագետների համար Անցկացման վայր՝ Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Եղեգնաձորի ԲԿ		
<p>Նախատեսվում է զննել, հետազոտել և քննարկել մարզի ներգատաբանների կողմից ընտրված և ուղարկված համապատասխան ախտորոշումով (շաքարախտ) հիվանդներ: Հիվանդների հետազոտություններն իրականացվելու են սկզբում մասնակիցների (ակնաբույժներ), այնուհետև դասընթացավարների կողմից՝ տվյալ բուժկենտրոնում առկա գործիքներով և սարքավորումներով. նախատեսվում է ուղղակի օֆթալմոսկոպի և ճեղքային լամպի կիրառում: Բացի այդ, Արարատի մարզում կիրառվելու է Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ-ի Remidio ակնահատակի նկարահանման սարքը:</p>		
10:00-12:30	Կիրառական պարապմունքներ և կլինիկական դեպքերի վերլուծություն:	Լիլիթ Աբգարյան
12:30-13:00	Ընդմիջում:	
13:00-15:30	Կիրառական պարապմունքներ և կլինիկական դեպքերի վերլուծություն:	Սիրանույշ Մատինյան

Թիրախային լսարան՝ ակնաբույժներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ ընդհանուր 10 հոգի:

Սեմինարի մաս հանդիսացող «Հիվանդների հետազոտում» սեկցիաներում նախատեսվում է իրականացնել ինչպես խորհրդատվության տրամադրում՝ դասընթացավարների կողմից մասնակիցներին, այնպես էլ դասընթացավարների և մասնակիցների կողմից գործիքային հետազոտությունների անցկացում: Գործիքային հետազոտություններն անցկացնելու են ՄաԱԿ-ի մասնագետները և սեմինարի մասնակիցներից ակնաբույժներն՝ անձամբ: Պլանավորվում է Մալայանի անվ. ակնաբուժական կենտրոնի վիրտեոռետինալ բաժանմունքում հասանելի և տվյալ հիվանդի զննման և հետազոտման համար անհրաժեշտ գործիքների և

սարքավորումների կիրառում: Հետազոտությունները ներառում են՝ տեսողության սրության չափում, ներակնային ճնշման չափում, բիոմիկրոսկոպիա, բիոմիկրոօֆթալմոսկոպիա, օֆթալմոսկոպիա (անուղղակի), ակնային ՈւՁ հետազոտություն, օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա (OCT):

Յուրաքանչյուր հիվանդի (կլինիկական դեպքի) շուրջ կայանալու է դասընթացավարների և մասնակիցների միջև քննարկում, հիվանդի գանգատների և օբյեկտիվ գննման արդյունքների վերլուծություն, երկկողմանի (դասընթացավարներ-մասնակիցներ) առաջարկությունների ներկայացում և հիվանդի՝ լավագույն (օպտիմալ) բուժման պլանի մշակում՝ հիվանդի հետագա վարման նպատակով: